Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով Դեղորայքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի

27.04.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն

Անդամներ

Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բագիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**

(Ս. Խաչատրյան)

Հիմք ընդունելով «ԱԷՄՁԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում է 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելուց հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԱԷՄՁԻ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունը:

Վերջինիս կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգ է ներմուծվել շտկման ենթակա ապրանքի ամբողջական նկարագիրը, «ԱԷՄՁԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝ մասնակցի հայտը գնահատել բավարար և ներկայացնել հետագա գնահատման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **Մասնակիցների առաջարկած գների մասին**

(Ս. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելված 1-ով.

Համաձայն կից ներկայացված գնային առաջարկների հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18 մայիսի 2017թվականի թիվ 534-Ն որոշման 19-րդ կետի 1-ին ենթակետը՝ Համակարգի կողմից մերժվել են Մասնակիցների հայտերը 6-րդ և 17-րդ չափաբաժինների մասով, քանի որ ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքների ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գնման գները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

(Ս. Խաչատրյան)

«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման ապրանքների բնութագրի՝ օրենքով սահմանված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ –0

4. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին

(Ս. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչել

- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին - 3, 4, 7, 11, 12, 13, 15, 19, 21, 22, 23, 28, 31, 32, 34-րդ և 35-րդ** չափաբաժինների մասով:
- **«Տոնուս-Լես» ՍՊԸ-ին – 2, 9, 18, 29-րդ և 33-րդ** չափաբաժինների մասով:
- **«Իվաֆարմ» ՍՊԸ-ին - 16-րդ և 18-րդ** չափաբաժինների մասով:
- **«ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին - 5-րդ** չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4.2 ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-26/14 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ

Համաձայն <<Գնումների մասին>> << օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և << Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 6-րդ և 17-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև հայտարարել չկայացած 1, 8, 10, 14, 16, 20, 24, 25, 26, 27-րդ և 30-րդ չափաբաժինների մասով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» << Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» << Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**